ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյանի և
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյանի
հաշվետվությունը ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի
51-րդ նստաշրջանին մասնակցության վերաբերյալ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Ա. Սաֆյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

ԱՄՆ/ Նյու Յորք/03.03-06.03.2020թ.

- **Նպատակը**

ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 51-րդ նստաշրջան

- **Քննարկված թեմաները**

Հանձնաժողովը համարվում է գերագույն մարմին միջազգային վիճակագրական համակարգում, որը քննության է առնում և հաստատում միջազգային վիճակագրական չափորոշիչները:

Տնտեսական և սոցիալական խորհուրդը չափազանց կարևորում է հանձնաժողովի համակարգման գործառույթը և դերը՝ հասնելու միջազգային վիճակագրության հավաքագրման, մշակման և տարածման ինտեգրացված համակարգի:

Վիճակագրական հանձնաժողովի գործառույթների շարքին են դասվում.

- օժանդակումն ազգային վիճակագրությունների զարգացմանը և դրանց համադրելիության կատարելագործմանը,
- մասնագիտացված գործակալությունների վիճակագրական աշխատանքների համակարգումը,
- քարտուղարության կենտրոնական վիճակագրական ծառայությունների զարգացումը,
- վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, մեկնաբանման և տարածման հետ կապված ընդհանուր հարցերի վերաբերյալ խորհրդատվության ցուցաբերումը ՄԱԿ-ի մարմիններին,
- օժանդակումը վիճակագրության և վիճակագրական մեթոդների կատարելագործմանը:

1999թ. հուլիսին Տնտեսական և սոցիալական խորհուրդը որոշում է կայացրել, որ սկսած 2000թ. հանձնաժողովը պետք է հանդիպի տարին մեկ անգամ՝ 4 օրով: Հանձնաժողովի հանդիպման արդյունքներով կազմված հաշվետվությունը ներկայացվում է Տնտեսական և սոցիալական խորհրդի նստաշրջանի քննարկմանը:

Հանձնաժողովի 51-րդ նստաշրջանում քննարկվեցին հետևյալ հիմնահարցերը.

1.Պաշտոնատարների ընտրություն

2. Օրակարգի հաստատում և այլ կազմակերպական հարցեր

3. Քննարկման և որոշումների կայացման համար հարցեր.

- տվյալներ և ցուցանիշներ Կայուն զարգացման 2030թ. օրակարգի համար,
- վիճակագրական ծրագրերի համակարգում,
- տնտեսական վիճակագրության ապագա,
- ազգային հաշիվներ,
- միջազգային առևտրի և բիզնեսի վիճակագրություն,
- գների վիճակագրություն,
- միջազգային համադրումների ծրագիր,
- շրջակա միջավայրի-տնտեսական հաշվառում,
- գյուղատնտեսական և գյուղական վիճակագրություն,
- ժողովրդագրական վիճակագրություն,
- քաղաքացիական գրանցում և կենսական վիճակագրություն,
- առողջության վիճակագրություն,
- գենդերային վիճակագրություն,
- փախստականների վիճակագրություն,
- կառավարման, խաղաղության և անվտանգության վիճակագրություն,
- տարածաշրջանային վիճակագրական զարգացում,
- պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները,
- վիճակագրական համակարգերի կառավարում և մոդեռնիզացում,
- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների վիճակագրություն,
- մեծ տվյալներ,
- վիճակագրական և աշխարհատարածական տեղեկատվության ինտեգրում,
- բաց տվյալներ,
- վիճակագրական հանձնաժողովի աշխատանքային մեթոդները,
- վիճակագրության համաշխարհային օրը,

4. Տեղեկատվության համար հարցեր.

- Գլխավոր Վեհաժողովի ու Տնտեսական և Սոցիալական Խորհրդի քաղաքականության որոշումներին հետամուտ լինելը,
- կարճաժամկետ տնտեսական վիճակագրություն,
- գների վիճակագրություն,
- ծառայությունների վիճակագրություն,
- շրջակա միջավայրի վիճակագրություն,
- հաշմանդամության վիճակագրություն,
- մարդկային զարգացման վիճակագրություն,

5. Ծրագրի հարցեր (վիճակագրության բաժին)

6. Հանձնաժողովի 52-րդ նստաշրջանի նախնական օրակարգը և անցկացման ժամկետները

7. Հանձնաժողովի զեկույցն իր 51-րդ նստաշրջանի վերաբերյալ:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյանը ելույթով հանդես եկավ հետևյալ հարցերի շուրջ՝ «ժողովրդագրական վիճակագրություն», «փախստականների վիճակագրություն» ու «կառավարման, խաղաղության և

անվտանգության վիճակագրություն», մասնավորապես, կարևորելով և բարձր գնահատելով երեք ոլորտներում փորձագիտական խմբերի կողմից կատարված աշխատանքը և մշակված զեկույցները ու ձեռնարկները, միաժամանակ ներկայացնելով նաև հետագա գործողության ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ:

Մարտի 5-ին «փախստականների վիճակագրություն» հարցի քննարկման ժամանակ Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչն իր խոսքում մեղադրանք հնչեցրեց Հայաստանի հասցեին և անդրադարձավ Ադրբեջանի այսպես կոչված «փախստականների» հարցին՝ նշելով, որ դա Ադրբեջանի և Հայաստանի միջև Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքն է: ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյանը, ձայն խնդրելով, հանդես եկավ պատասխան խոսքով և արտահայտեց իր խիստ բողոքը Ադրբեջանի ներկայացուցչի անհարիր վարքագծի համար: Նա նշեց. «Քանի որ Ադրբեջանի վիճակագրության ներկայացուցիչը, օգտագործելով ՄԱԿ-ի Վիճակագրական Հանձնաժողովի հարթակը, իր խոսքում հնչեցրեց քաղաքական բնույթի մեղադրանք հիշատակելով իմ երկրի անվանումը, ապա հարկ է նշել, որ երրորդ անգամ պետք է հիշեցնեմ Ադրբեջանի ներկայացուցչին, որ մենք հիմա գտնվում ենք ոչ թե ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի նիստում, այլ ՄԱԿ-ի Վիճակագրական Հանձնաժողովի նիստում, որի լիազորությունները, ըստ ՄԱԿ-ի Պաշտոնական վիճակագրության հիմնարար Սկզբունքների, բացառում են պաշտոնական վիճակագրության ներքաշումը քաղաքական և նմանատիպ շահերի կոնֆլիկտներում»: Նախագահողը՝ միանալով պ. Մնացականյանի կոչին, ինքն էլ կոչ արեց չօգտագործել Հանձնաժողովի հարթակը քաղաքական հայտարարությունների համար:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյանը ելույթով հանդես եկավ «բաց տվյալներ» հարցի ներքո, մասնավորապես ողջունելով զեկույցը, բարձր գնահատեց աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքը և շնորհակալություն հայտնելով ԱՄՆ-ին Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) վիճակագրության Ազգային հաշվետվողականության հարթակի (հիմնված բաց տվյալների աղբյուրի վրա) մշակման, ստեղծման, գործարկման համար ցուցաբերած մեծ օժանդակության համար, ներկայացրեց Հայաստանի փորձը և հարթակի կարևորությունը ներդնելու նոր բաց տվյալների մշակույթ և բարձրացնելու ու ամրապնդելու վիճակագրական կոմիտեի համակարգման և առաջնորդման դերը ազգային վիճակագրական համակարգում և խրախուսեց այլ երկրներին հետևելու այդ հարթակի ներդրման փորձին:

Նստաշրջանին նախատեսված էին բազմաթիվ հարակից միջոցառումներ, որոնց հրավիրվում են մասնակցելու տարբեր ոլորտներում հաջողված փորձ ունեցող երկրների նստաշրջանին մասնակցող պատվիրակությունների անդամները:

Մարտի 4-ին մասնակցել ենք ԿԶՆ-ի գծով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված հարակից հանդիպմանը, որի ժամանակ քննարկվեցին հարցեր կապված 2020թ. Կայուն զարգացման տարածաշրջանային ֆորումի, ԿԶՆ-ի գծով 2020թ. ապրիլին կայանալիք փորձագիտական խմբի հանդիպման և աշխատանքային հանդիպման, ինչպես նաև ԿԶՆ-ի համար ճանապարհային քարտեզի 2-րդ հրապարակման հետ:

Մարտի 6-ին մասնակցել ենք ՄԱԿ-ում Դանիայի մշտական ներկայացուցչության կողմից կազմակերպված «Տեղեկացված որոշման կայացում հարկադիր տեղահանման վերաբերյալ՝ առաջ քաշելով տվյալներ և ապացույցներ» խորագրով հարակից հանդիպմանը, որի նպատակն էր քննարկել հարցեր կապված առկա նախաձեռնությունների և գործընկերությունների հետ առաջ տանելու կառավարության պատասխանները հարկադիր տեղահանմանը:

- **Արդյունքները**

Մասնակցությունը ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 51-րդ նստաշրջանին հնարավորություն ընձեռեց քննարկելու միջազգային զարգացման նպատակները՝ տվյալները և ցուցանիշները Կայուն զարգացման 2030թ. օրակարգի համար, Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների միջգերատեսչական և փորձագիտական խմբի հաշվետվությունը՝ կայուն զարգացման գլոբալ ցուցանիշների շրջանակի իրականացման շարունակական աշխատանքների վերաբերյալ, ՄԱԿ-ի Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների իրականացման խնդիրները, 20.10.2020թ. վիճակագրության համաշխարհային օրվա կազմակերպման հարցերը, ինչպես նաև ծանոթանալու վիճակագրական տարբեր ոլորտների վերջին զարգացումներին, մշակված արդի ձեռնարկներին և լավագույն փորձին, ամրապնդելու վիճակագրական համակարգի կարողությունները և խթանելու զարգացումները, կատարելագործելու վիճակագրության տարբեր ոլորտները միջազգային պրակտիկայում կիրառվող ժամանակակից մեթոդաբանական գործիքակազմին և ստանդարտներին համահունչ, ինչպես նաև քննարկելու համակարգի զարգացման հեռանկարները և հետագա համագործակցության հնարավորությունները:

- **Նշումներ**

Նստաշրջանի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ Ռուսաստանի Պետական վիճակագրության դաշնային ծառայության ղեկավար՝ պ. Պ. Մալկովի, ղեկավարի տեղակալ՝ պ. Ս. Եգորենկոյի և արտասահմանյան երկրների վիճակագրության և միջազգային վիճակագրական ծրագրերի վարչության պետ՝ պ. Գ. Օկսենոտի հետ, մասնավորապես վիճակագրական հաշվետվությունների առցանց համակարգի (e-reporting system) և վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակման ստանդարտի (SDMX) ներդրման ուղղությամբ փորձի փոխանակման վերաբերյալ:

Հետագա համագործակցության հնարավորությունները քննարկվել են նաև Դանիայի ազգային վիճակագրական ծառայության Գլխավոր տնօրեն՝ պ. Յ. Էլմեսկովի հետ, մասնավորապես երրորդ Թվինինգ ծրագրի վերաբերյալ, Նորվեգիայի ազգային վիճակագրական ծառայության ներկայացուցիչ՝ պ. Վյոբյորնի հետ, մասնավորապես մարդահամարի և փախստականների ու հարկադիր տեղահանվածների վիճակագրության բնագավառներում, ինչպես նաև պ. Վյոբյորնի

և ՄԱԿ-ի ՓԳՀ-ի Գլխավոր վիճակագիր՝ պ. Տ. Չաբակեի հետ Հայաստանը փախստականների գծով փորձագիտական խմբում ներգրավելու վերաբերյալ, ԱՄՆ-ի Հաշվառումների Բյուրոյի ներկայացուցիչ՝ պ. Օ. Ֆիշերի հետ, մասնավորապես մարդահամարի բնագավառում, ԱՄՆ-ի վիճակագրության փորձագետներ՝ տ. Կալի Կոնգի և տ. Ջեննիֆեր Պառկի հետ ԿՀՆ-ի վիճակագրության Ազգային հաշվետվողականության հարթակի գծով հետագա համագործակցության վերաբերյալ:

Մարտի 4-ին տեղի ունեցավ քննարկում ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի տնօրեն՝ պ. Ստեֆան Շվեյնֆեստի հետ կապված Հայաստանի կողմից ներկայացվելիք հայտի հետ, պայմանավորված 2022 թ. ՄԱԿ-ի տվյալների համաշխարհային ֆորումը Հայաստանում անցկացնելու ցանկությամբ:

Հանձնաժողովի 51-րդ նստաշրջանին մասնակցում էին ներկայացուցիչներ հանձնաժողովի անդամ երկրներից, ինչպես նաև դիտորդներ ՄԱԿ-ի այլ անդամ երկրներից և ոչ անդամ երկրներից, ներկայացուցիչներ ՄԱԿ-ի համակարգի կազմակերպություններից և դիտորդներ միջկառավարական, հասարակական և այլ կազմակերպություններից: Հանձնաժողովին քննարկված և բոլոր լեզուներով թարգմանված փաստաթղթերը տեղադրվել են կայքում (https://unstats.un.org/unsd/statcom/51st-session/documents/#documentation):

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյան

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյան